

Ա Ր Ա Ր Ա Տ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱԽՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ:

ԹԻՒԹ.—ՇՐՋԱՆ Զ.

1873

ՏԱՐԻ Զ.—ՍԵՂՏԵՄԲԵՐ 30

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵՊԻՂԵՑԱԿԱՆՔ ԵՒ ԹՈՂԹՎՈՒՐԻՔ

Ստոյգ է որ՝ շատ երկար ժամանակի արդիւնք չլինելով՝ մի օտար՝ բայց նոր «Լը-քոն» կ'ընթարթուի՝ Մղզիս մէջ ի տեղեւ տեղեւ եկեղեցականաց և ժողովրդեան մէջ խորհրդանշան սերմանելոյ համար՝ իբր թէ երկուքն ևս ի միմեանց օտար մարմիններ կազմէին և այլազգ և իրերահակառակ շահեր ունենային:

Թէպէտ այս սկզբանց կհետեւին հռովմէական և այլ եկեղեցիք ոմանք, զուցէ նոցա դիրքեր կներկն խտրութեամբք վարուիլ իւրեանց ինքնուրոյն իշխանութեանց՝ պարտաւորութեանց և պաշտօնից մէջ, սակայն այսպիսի մի նոր և օտարօտի սկզբունք և դիրք երբեք տեսնուած չէ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ՝ ոչ ի հնումն և ոչ պէտք է թողուլ որ սարդի ի նորումն և յապագայն:

Վասն զի ինչ կնշանակէ եկեղեցականաց և ժողովրդեան մէջ այնպիսի խտրու-

թիւններ սերմանել՝ որպիսին նոյն իսկ ընդհանուր Եկեղեցւոյ վիճակին և Վրիտանիոյ պատուիրանաց հակառակ են: Խընդիրը չշփոթելով կրօնական և աշխարհական պարտաւորութեանց հետ, հետազօտեմք թէ՛ ո՞վ է զԵկեղեցին բաղկացնողն և նորա նիւթական կառավարութիւնը մատակարարող և առատաձեռնողն, ո՞վ է եկեղեցականքը կամ Եկեղեցւոյ պաշտօնեայքը ընտրող և նոցա պէտքերը հոգացողն, և վերջապէս՝ ո՞վ է Եկեղեցւոյ գոյութիւնը պայծառ և յարատե ապահովողն, և ահա յայնժամ դիւրին է մակարերել և իմանալ ժողովրդեան և եկեղեցականաց փոխադարձ յարաբերութիւնքը և պարտաւորութիւնքը:

Յայտնի բան է՝ զի առանց ժողովրդեան եկեղեցիք և պաշտօնեայք նշանակութիւն կամ գոյութիւն չեն կարող ունենալ, և թէ երբ ժողովրդեան համար են սոքա, ապա ուրեմն ժողովուրդն պարզ պարտքեր և իրաւունքներ ունի և պիտի ունենայ:

Ապա ժողովրդեան իրաւունքները ո՞րք են ընդ պարտուցն:

Ինչ որ ժողովուրդն կրկազմէ, ինչ որ ժողովուրդն կրտայ և կհոգայ միշտ, ինչ որ ժողովուրդն կապահովէ, ի նոսա ժողովուրդիան իրաւունքները ակնյայտնի կը հանդիսանան. ըստ որում եթէ պարտաւոր է զայն ամենայն կազմել, տալ, հոգալ և ապահովել մինչև անգամ արեամբ չափ շահատակելով, չէ որ այնպիսի պարտաւորութեանց հետ կցորդ և անհրաժեշտ իրաւունքներ ևս ունին: Օր օրին, ղինուորեալ եկեղեցին տեսականաւորուելով ի նիւթական եկեղեցին, ժողովուրդն կպարտաւորուի զայն կառուցանել իւր արդեամբք և նուիրանօք: Ակեղեցին կարօտ լինելով պաշտօնէից՝ ժողովուրդն կը պարտաւորուի իւր մէջէն արժանաւորները ընտրել և նոցա նիւթական պիտոյքը հոգալ իւր արդեամբք և նուիրանօք: Ակեղեցին իւր կառավարութեան մէջ կրելով նիւթական բազում և անհրաժեշտ կարօտութիւնք և պիտոյքը, ժողովուրդն կպարտաւորուի զայն ամենն լրացնել՝ հոգալով իւր արդեամբք և նուիրանօք: Ակեղեցւոյ յարաւելութեան և ապահով պայծառութեան, արժանաւոր և հմուտ պաշտօնէից պատրաստութեան՝ և նոյն իսկ ազգային կրթութեան՝ լիզուի և կրօնի ուսուցման համար ամենակարեւոր գործով հոգեւոր զպրօցներ, վարժարաններ ևն, ժողովուրդն կպարտաւորուի սուստաձեւել նոցա ծախքերը և տնտեսական համայն պէտքերը: Աւերջապէս՝ Ակեղեցւոյ գոյութիւնը յարաւել և ապահով պահպանելոյ և ընդ դէմ չարանպատակ հակառակորդաց յաւէտ պաշտպանելոյ համար՝ ժողովուրդն կպարտաւորուի չննայել իւր ամեն ձիգը, և սիրայօժար ի զոհ

նուիրուիլ: Սակայն պէտք է կրկնել, որ ամեն այսպիսի պարտաւորութիւնք փոխարէն իրաւունքներ չունենան ամենայն արդարութեամբք. ուստի ժողովուրդն իրաւունքներ չունի՞ իւր կառուցած Ակեղեցւոյ պակասութիւնքը դիտել և աւարտել, իւր ընտրած և սնուցած պաշտօնէից սեպուհ պարտաւորութեանց ըստ արժանեցն և անթերի կապարմամբք մխիթարուիլ, Ակեղեցւոյ կառավարութեան մէջ իւր մասն ունենալ իբրեւ քաղաքական անձն և տնտեսութեան մէջ փորձեալ և հմուտ, միանգամայն օրինաւոր հաշիւ պահել տալ և պահանջել, հոգեւոր զըզրոցաց ուսումնական և տնտեսական մատակարարութեանց մէջ մասն ունենալ՝ նպաստել ըստ կարեաց և արդիւնաւորել փոխադարձ աջակցութեամբք, Ակեղեցւոյ գոյութեան հսկել և նորա թշնամիքը ճանաչել, և նոցա նպատակները դիտել՝ իմանալ և առաջքը առնուլ:

Ո՛վ որ քաջ կձանաչէ ժողովրդեան սեպհական իրաւունքը, չէ կարող ժողովրդական այսպիսի օրինաւոր և արդար պահանջքը ժխտել: Այո՛ նոյն իսկ բռնաւորք իւրեանց միահեծան ընթացից մէջ չեն կարող ժխտել ժողովրդական իրաւունքը, և կջանան ժողովրդական կամօք և ընտրութեամբ ձեւել իւրեանց իշխանութիւնքը և այնպէս ձանչցնել: — Թող ընդհանուր պատմութիւնն վկայ լինի, և հետաքրքիրներ թող ի նմին փրնտընն բազում ապացոյցներ, և դիւրութեամբ կգտնեն:

Ապտէն Վրիստ. Ակեղեցւոյ հիմնադիր մեր Փրկիչ Յիսուս Վրիստոս անգամ շատ պարագաներու մէջ ինքնին օրինա-

կաւ անձին ուսոյց ժողովրդական պարտաւորութիւնքը և իրաւունքները քարոզելով և աւանդելով՝ մինչև անգամ փառիսեցւոց ևն. կեղծաւորութեանց և մարդութեանց համար առ ժողովուրդն բողոքելով :

Չեմ յիշել Առաքելական դարում և յետոյ՝ հաւատացելոց ընդ առաքելոց և ընդ աշակերտան ժողովներու մէջ իւրեանց բաժինն ունենալն, և միաբան խորհրդով Ակեղեցւոյ պիտոյից և կառավարութեան հոգացուիլն :

Ի՞նչ, միթէ բուն տանուէր մի իրաւունք պիտի չունենայ տան կառավարութեան և պիտոյից մէջ զանազան մասերում մասնակցել, հսկել, հոգալ, և ապահովել զայնա: Ո՞չ ապաքէն ժողովուրդն տանուէրէ իւր առանձին առանձին ազգին և ընտանեաց մէջ: Առանց ժողովրդեան երբեք նշանակութիւն չեն կարող ունենալ ո՛չ միայն եկեղեցիք, այլ և կառավարութիւնք անգամ: Արդիսի՞ իրաւունքով ուրեմն չպիտի ծանաչուին ժողովրդական իրաւունքներն այն ամեն պարագայից մէջ՝ որոց գոյութիւն, կառավարութիւն, յարատեւութիւն, պայծառութիւն և փառաւորութիւն նոքօք իրական և ապահովեալ են: Ո՞ր խիղճ կնեւէ զժողովուրդն համադասել յանրանից կարգ և ըստ այնմ վարուիլ նոցա հետ, թէ և մտածել պէտք է՝ որ անբանք անգամ իւրեանց այնպիսի անբանական վիճակին մէջ իրաւունքներ ունին, և մարդիկ կճանաչեն և կգործադրեն:

Ա՛րբ և ո՛ւր որ լինի, ժողովրդեան իրաւունքները չճանաչել՝ որ և իցէ ազգի գոյութիւնը վտանգել և ընդփոյթ ի կորուստ մասնել կհետեւնէ:

Արդ Հայոց համար այսպիսի ժողովրդական իրաւունքները հանգերձ փոխադարձ պարտաւորութեամբն ի նախնեաց հետէ նուիրագործեալ են և շարունակուած. Հայոց այսպիսի ազատութիւնը իւրեանց համար միս և արիւն դարձել է և այժմ կհամարուի մահու և կենաց խնդիր:

Ո՞վ է ուրեմն և ի՞նչ իրաւունքով պիտի ժխտէ Հայոց այս գրութիւնը և օտարոտի նոր իմն սկզբունք պիտի սպրդէ ի Հայս:

Սակայն մեք՝ Հայոց եկեղեցականքս երբեք չեմք կարող բնաւ ներել՝ որ ժողովրդեան իրաւունքները խղրուին կամ հարուածուին: Այո՛ ի նախնեաց հետէ Հայաստանեայց Ակեղեցւոյ պաշտօնէից և ժողովրդեան մէջ յարատեւած սոյնպիսի փոխադարձ սերտ կապակցութիւնք և յարաբերութիւնքն ընդ հուր և ընդ ջուր անցուցանելով զՀայութիւն և զԱկեղեցին՝ այսօր նոցա գոյութիւն աւանդել են աշխարհիս մէջ, և ըստ այսմ միայն հնար է ապահով յարատեւել: Հայաստանեայց Ակեղեցին ժողովրդական իրաւունքները քաջ կճանաչէ և կյարգէ, նմին մեծարելի է ժողովրդական օրինաւոր և արդար ձայնը, նորա կեանքը կապահովին ժողովրդեան իրաւունքները: Մինչև անգամ Ակեղեցւոյ մէջ ժողովրդական արդար և օրինաւոր ձայնը իրաւունք ունի և բուական է արդիւիլ տալ ո և իցէ մի անարժան անձի ի սպասաւորութիւն Ակեղեցւոյ կոչումը:

Սակայն մեծապէս կցաւիմ՝ զի ի տեղիս տեղիս և դիւս երկար ժամանակէ ի վեր չէ՝ որ ժողովրդական ձայնը սպանանելոյ

ձիգ և ջանքեր կան, և ինչո՞ւ չասեմ՝ որ արդէն մի քանի տեղեր և ինչ ինչ կենսական խնդրոց մէջ խղճուած են ժողովրդական ձայները և իրաւունքները, որով եկեղեցականաց և ժողովրդեան մէջ խտրութիւնք սերմանուած են, և հետեւանքն ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ Ակեղեցւոյ վտանգուիլը և դամ քան զգամ տըկարանալ և անհետ լինելն Ազգիս :

Արեւի Հայեր, զգաստեղիք և քաջ ծանաչեցէք նախ ձեր պարտքերը և ապա ժողովրդական արդար և օրինաւոր իրաւունքները մեր Ակեղեցւոյ և Ազգութեան մէջ, զգոյշ կացէք և պաշտպանեցէք, միանգամայն զայնոսիկ գործածել գիտացէք: Այս պէտք է գիտնաք, բայց խնդիրը օրինաւոր և հիմնաւոր բռնելով՝ հիմնաւոր յառաջացէք: Վա՛ւք ունիք արգարեւ շատ մեծ և վսեմ պարտաւորութիւններ, բայց զայնոսիկ կատարելով՝ հանդերձ՝ կատարեցէք և Չեր նուիրական իրաւունքները: Քաջ գիտացէք որ օրինաւորութեան և արդար իրաւանց առջև ամենայն ինչ կը խոնարհի և կը փշրուի. անմերձեւալի և անսասանելի կարծուած ահագին ժայռերն և լեռներն անգամ առ ոչինչ են արդարութեան և իրաւանց առջև:

Թող Հոովմն և այլ Ակեղեցիք խրաբութեամբք վարուին իւրեանց զանազան ազգերէ և ցեղերէ բաղկացած ժողովրդոց հետ, բայց մեք շնորհմբ երբէք՝ որ մեր Հայաստանեայց միասերունդ և համարիւն ազգէ կաղմեալ Ակեղեցւոյ պաշտած և ի հետեւ նուիրագործած իրաւունքները և ժողովրդականութիւնը յօտարաց բռնաբարուի և հարուածուի. շնորհմբ որ՝ Ակեղեցւոյ նուիրագործեալ իրաւունքներն

բնաջինջ լինին: Ապա թէ ոչ՝ մեր Ակեղեցւոյ և ազգութեան գոյութիւնը կը վտանգուի և շուտով կանհետանայ:

Տգիտութիւնն մթնաշաղախ վարագործելով մօաց տեսութիւնները՝ կթիւադրեն յիշածիս պէս նոր սկզբունքները, սակայն երբ մեր բոլոր ուժը տալով՝ մի սիրտ և մի հոգի եղած՝ հանգարտ և շըրջանկատ կհետեւիմք հոգեւոր դպրոցաց հաստատութեան և արդիւնաւոր պայծառութեան, ոչ որ թող չտարակուսի՝ որ յայնժամ զիւրագոյն կպատուին տըգիտութեան սոյնպիսի նենգաւոր վարագործքը, և բարոյական և մտաւորական լուսաւորութիւն և զարգացումն Ազգիս առջև կհորդեն յառաջադիմութեան բաղմաբաղձ և գեղեցիկ ուղի, և հայածական կը վարուին ի մէջ օտարոտի և փնասակար սկզբունքներն և ջանքերն, և կապահովուին մեր պաշտելի Ակեղեցի և Ազգութիւն:

Ահաւասիկ այսքան առայժմ կխօսիմ այս խնդրոյս վերայ, և գուցէ բարեպատեհ առիթ ունենամ կրկին գրելոյ:

ՂԱՆՏՄԱԿԱՆ ՎԱՐՈՒՄ ԳԱՐԻՈՂՅՏ ՄԱՆԿՈՒՆԵՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

(Շ-բ-ռ-ն-կ-ն-ի-ն- և վերջ):

Երգ Օստիթաց, որչափ կարողի լսել, զեզանակ կամ զնմանութիւն բերէ Եւրոպականացն երգոց, Երկուք են յառաջագեմ ազնիւր Պովկասու, Հայք և Վիլք, բայց երգք նոցա այնպիսի եղանակս կամ պարս ձայնից ունին, զոր ոչ կարեմք յայտնել մերովք երաժշտական խաղիւք (նօթ), գուցէ մի-